



Արարատի մարզ, Արարատ, Շահումյան փող., 34 շենք  
Էլ. հասցե: [infoararat@aarhus.am](mailto:infoararat@aarhus.am), [vigenchilingaryan@gmail.com](mailto:vigenchilingaryan@gmail.com)  
Հեռ. +374 99 00 85 89

N AA - 001

« 19 » մայիս 2014թ

ՀՀ բնապահպանության նախարար  
Արամայիս Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Արարատի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն.

1. 2013 թվականի հուլիս ամսին, Արարատի մարզի Դալար համայնքի տարածքով անցնող ջրանցքում արձանագրված ձկների զանգվածային ոչնչացման դեպքի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների՝ մակերևութային ջրերի և սատկած ձկների նմուշառման արդյունքները:
2. Վերնշված դեպքից բխող՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացված կամ պլանային աշխատանքների մասին տեղեկատվություն:
3. Ինչպես նաև ՀՀ ոստիկանության կողմից պաշտոնական հարցման պատասխանը ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչությանը, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և ՀՀ քրեական օրենսգրքի 287, 292 և 293 հոդվածների հատկանիշներ պարունակող դեպքի վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Արարատի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Վ. Չիլինգարյան